

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ԲԱՆԲԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ

3(120)

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА

ԵՐԵՎԱՆ - 2006

**ԼՈՒԻԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԶԵՂՉՍԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ
ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ**

Մ. Յ. ՅԱՂՈՒԲՅԱՆ

Խոսքային գործունեությունը մարդկային մտածողության դրսևորման ձևերից մեկն է և, ինչպես յուրաքանչյուր գործողություն, ունի որոշակի նպատակ:

Ինչպես գիտենք, խոսքը հիմնականում դրսևորվում է լեզվական միջոցներով՝ հընչյունների, բառերի, բառակապակցությունների, ասույթների և համապատասխան հնչերանգային արտահայտչամիջոցների շնորհիվ^{*}: Սակայն, վերջին տարիներին գործաբանական լեզվաբանության շրջանակներում քննարկվում է նաև լուսքյան դերը խոսքի գործընթացում, ընդ որում՝ լուսքյունը դիտվում է ոչ թե որպես խոսքի բացակայություն, այլ որպես խոսքային գործունեության ձև՝ իմաստակիր լուսքյուն: Լուսքյունը դիտելով որպես խոսքային գործունեության ձև՝ բառի այլընտրանքային տարբերակ, գործաբանները նշում են, որ այն մարդկային հաղորդակցման տարրերից մեկն է և խոսքային այլ միջոցների նման հաղորդակցական իմաստ ունի: Որպես հաղորդակցման ձև՝ լուսքյունը լրացնում է խոսքը, լրացուցիչ իմաստային երանգ հաղորդում դրան: Բառային խոսքի դադարը որոշակի հաղորդակցական գործառույթ է իրականացնում խոսքային գործունեության ընթացքում՝ կախված հաղորդակցման իրավիճակային, հասարակական և հոգեբանական գործոններից¹: Սույն հոդվածի նպատակն է լուսաբանել լուսքյան գործաբանական առանձնահատկությունները խոսքում՝ դիտելով այն որպես զեղչման հաղորդակցական ռազմավարության դրսևորում: Ռազմավարությունը խոսքային գործունեությունն արդյունավետ դարձնելու միջոց է, որի շնորհիվ խոսողը հաջող կերպով իրականացնում է իր հաղորդակցական նպատակը²: Տվյալ դեպքում, լուսքյունը՝ ասելիքի որոշակի մասը զեղչելով, խոսողը ներակա ձևով ընդգծում է ենթադրվող հաղորդակցական նպատակը և ներգրավում իր գրուցակցին դրա իրականացման գործում^{**}: Բնական է, որ ճիշտ ռազմավարության ընտրությունը և իրականացումը կախված է հաղորդակցվողների ծանոթության աստիճանից, իրադրությունից, խոսող անհատի հոգեբանական տիպից:

Լուսքյան ակտը, ինչ խոսք, ազդանշան է, որն ունի տարբեր տարատեսակներ: Այսպես, ընդունված է տարբերակել պայմանական և հաղորդակցական լուսքյունը: Առաջինը կանոնակարգվում է տվյալ միջավայրի հանրամշակութային ավանդույթներով: Այս տիպի լուսքյունը գործում է որոշակի հասարակական կոլեկտիվի անդամների շրջանակում (օրինակ՝ «մեկ թույն լուսքյունը», լուռ ողջունելը և հրաժեշտ տալը):

Հաղորդակցական լուսքյունը, որն առաջանում է անմիջական կենդանի երկխոսության ընթացքում, միանշանակ չէ և միշտ չէ, որ ընկալվում է հաղորդակիցներից մեկի կողմից որպես միտումնավոր լուսքյուն՝ լեզվական միջոցների դադարեցում գիտելիքի

* Խոսքը դրսևորվում է նաև արտալեզվական միջոցների՝ դիմախաղի, ձեռքերի, ոտքերի շարժումների, ինչպես նաև ոչ խոսքային գործողությունների օգնությամբ՝ դրոշակների, լույսերի, ձայնային նշանների և այլն:

¹ Տե՛ս **В. В. Налимов**, Непрерывность против дискретности в языке и мышлении, Тбилиси, 1978:

² Տե՛ս **Ш. А. Паронян**, Конвенции и правила речевого общения, «Кантех», сб. науч. тр., Ер., 2001, № 4, էջ 90-99:

** Ելնելով ուսումնասիրության նյութից՝ խոսք ասելով նկատի ունենք գրավոր ձևը: Լուսքյան դրսևորումը բանավոր խոսքում ունի իր արտաբերական, հաղորդակցական առանձնահատկությունները:

